# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 7/2023

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 1-ին հրավիրված 7-րդ նիստի /ընթացքը ձայնագրվել է/

**Հանձնաժողովի նիստի վայրը՝** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3

**Հանձնաժողովի նիստի սկիզբը՝** 2023 թվականի հունիսի 1-ին, ժամը 17:00

Հանձնաժողովի նախագահ՝

1. Արաքսիա Սվաջյան — ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարի տեղակալ

Մասնակիցներ՝

Հանձնաժողովի անդամներ՝

2. Վահրամ Գասպարյան — ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ /հանձնաժողովի անդամ գնահատող/
3. Ստալ Սարդարյան — Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/
4. Թամարա Գյոզալյան — Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
5. Կարինե Բաբայան — Նախարարության հանրակրթության վարչության փորձագետ /հանձնաժողովի անդամ, բացող/
6. Անուշ Գևորգյան — Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/

Բացակա էին.

1. Սուսաննա Ազատյանը, ով գործուղման մեջ էր արտերկրում,
2. Գոռ Գասպարյանը, ով ինքնաբացարկ է հայտարարել /շահերի բախում/:

**Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.**

**Հարց 1.** Դրամաշնորհային մրցույթների ժամանակացույցի համաձայն՝ մասնակիցների հայտերի բացում և ծանոթացում:

**Հարց 2.** Դրամաշնորհային մրցույթների մասնակիցների հայտերի քննարկում և ամփոփում:

**Զեկուցողներ՝** Նախարարության հանրակրթության վարչության փորձագետ՝ 2-րդ դասարանի մրցութային հանձնաժողովի քարտուղար Կ.Բաբայան և 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների մրցութային հանձնաժողովի քարտուղար հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գևորգյան:

Զեկուցողները հակիրճ ներկայացրեցին նիստի օրակարգում ընդգրկված հարցերը և դրանց բովանդակությունները՝ նշելով հարցերի քննարկման անհրաժեշտությունը:

***Օրակարգի 1-ին հարց.***

Բացվեցին և քննարկման ներկայացվեցին 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դրամաշնորհային մրցույթների մասնակիցների կողմից ներկայացված ծրարները /հայտեր/, որոնք պարունակում էին հայտահրավերների պահանջներին համապատասխանող փաստաթղթերը:

Հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների մասնակցությամբ ուսումնասիրվեցին ներկայացված փաստաթղթերը: Երկրորդ դասարանի «Մայրենի 2» /1-ին չափաբաժին/ առարկայի դասագիրքը բաժանվում է երկու մասի: Հեղինակ Վաչագան Սարգսյանը ներկայացրել է դասագիրք, որն ամբողջական է և բաղկացած է մեկ մասից, գնառաջարկը՝ 6300000 ՀՀ դրամ:

«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ-ի կողմից դասագրքի ստեղծման միավորի արժեքի փոխարեն սխալմամբ առաջարկվել է դասագրքի տպագրման միավորի գին՝ 1440 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 6 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

**1)** ընդունել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթները և բոլորի հայտերը համարել բավարար:

Երկրորդ դասարանի «Մայրենի 2» /1-ին չափաբաժին/ առարկայի դասագրքի հեղինակ Վաչագան Սարգսյանի հետ ձեռք բերել պայմանավորվածություն. փորձաքննությունն անցնելուց, դրական եզրակացություն ստանալուց հետո վերոնշյալ դասագիրքը հրատարակման ներկայացնել երկու մասով:

ֆինանսների նախարարություն՝ հայտահիրավերի նախահաշվային արժեքը /6 300 000 ՀՀ դրամ/ գերազանցող հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացնել բանակցություններ ներկայացված գների նվազեցման նպատակով:

***Օրակարգի 2-րդ հարց.***

Դրամաշնորհային մրցույթների մասնակիցների հայտերը քննարկվեցին և ամփոփվեցին հանձնաժողովի անդամների կողմից: Կից ներկայացվում է տեղեկանք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երկրորդ, հինգերորդ, յոթերորդ, տասներորդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի արդյունքների վերաբերյալ:

**6 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշվեց՝**

**1)** Քանի որ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգում» առկա չեն նման կարգավորումներ, հիմք ընդունելով խնդրի կարևորությունը՝ հանձնաժողովը որոշեց Նախարարին ներկայացնել առաջարկություն. դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հայտահիրավերի նախահաշվային արժեքը /6 300 000 ՀՀ դրամ/ գերազանցող հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացնել բանակցություններ ներկայացված գների նվազեցման նպատակով:

Հանձնաժողովի նախագահ — Արաքսիա Սվաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ — Վահրամ Գասպարյան

Ստալ Սարդարյան

Թամարա Գյոզալյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովների քարտուղար՝ — Անուշ Գևորգյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՐՈՐԴ, ՀԻՆԳԵՐՈՐԴ, ՅՈԹԵՐՈՐԴ, ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ***

| *Չափաբաժինների համարները* | *Չափաբաժնի անվանումը* | *Դասագրքերի քանակ* | *Մասնակիցների գնային առաջարկը* |
|---|---|---|---|
| 1 | Հայոց լեզու /հիմնական և նպատ. ծրագրերի համար/ | 0 | |
| 2 | Հայ գրականություն /հիմնական և նպատ. ծրագրերի համար/ | 1 | Էդիթ Պրինտ-21000000 |
| 3 | Հայոց պատմություն /հիմնական և նպատ. ծրագրերի համար/ | 0 | |
| 4 | Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր /հիմնական և նպատակային ծրագրերի համար/ | 1 | Էդիթ Պրինտ-21000000 |
| 5 | Երկրաչափություն /հիմնական և նպատ. ծրագրերի համար/ | 3 | Էդիթ Պրինտ-14000000, Աստղիկ գրատուն-12000000, Զանգակ-17280000 |
| 6 | Ռուսաց լեզու /հիմնական և նպատակային ծրագրերի համար | 0 | |
| 7 | Անգլերեն /հիմնական և նպատակային ծրագրերի համար/ | 1 | Զանգակ-6300000 |
| 8 | Ֆրանսերեն /հիմնական և նպատակային ծրագրերի համար/ | 0 | |
| 9 | Գերմաներեն /հիմնական և նպատակային ծրագրերի համար/ | 0 | |
| 10 | Համաշխարհային պատմություն /նպատ. ծրագրի համար/ | 0 | |
| 11 | Աշխարհագրություն /նպատակային ծրագրի համար/ | 1 | Էդիթ Պրինտ-21000000 |
| 12 | Հասարակագիտություն /նպատակայինծրագրի համար/ | 1 | Զանգակ-15360000 |
| 13 | Ֆիզիկա /նպատակային ծրագրի համար/ | 1 | Էդիթ Պրինտ-22000000 |
| 14 | Քիմիա /նպատակային ծրագրի համար/ | 1 | Անտարես-14890000, |
| 15 | Կենսաբանություն /նպատակային ծրագրի համար/ | 0 | |
| 16 | Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն /նպատակային ծրագրի համար/ | 0 | |
| 17 | Նախնական զինվորական պատրաստություն | 1 | Աստղիկ գրատուն-19500000 |
| 18 | Ֆիզկուլտուրա | 0 | |
| 19 | Երաժշտություն | 2 | Էդիթ Պրինտ-11000000, Զանգակ-15360000 |
| 20 | Արվեստ | 0 | |
| 21 | Կերպարվեստ | 2 | Անտարես-19890000, Զանգակ-11520000 |
| 22 | Բնագիտություն | 1 | Էդիթ Պրինտ-21000000 |

## ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

| Չափաբաժինների համարները | Չափաբաժնի անվանումը | Դասագրքերի քանակ | Մասնակիցների գնային առաջարկը |
|---|---|---|---|
| 1 | Հայոց լեզու | 2 | Աստղիկ գրատուն-19000000, Զանգակ-19800000 |
| 2 | Գրականություն | 2 | Էդիթ Պրինտ-22000000, Անտարես-20890000 |
| 3 | Հանրահաշիվ | 2 | Էդիթ Պրինտ-21000000, Մասնակցային դպրոց-5950000 |
| 4 | Երկրաչափություն | 2 | Աստղիկ գրատուն-17000000, Էդիթ Պրինտ-21000000 |
| 5 | Ռուսաց լեզու | 0 | |
| 6 | Անգլերեն | 1 | Զանգակ-6300000 |
| 7 | Ֆրանսերեն | 1 | Անտարես-12600000 |
| 8 | Գերմաներեն | 0 | |
| 9 | Հայոց պատմություն | 3 | Էդիթ Պրինտ-21000000, Անտարես-6100000, Մասնակցային դպրոց-5950000 |
| 10 | Համաշխարհային պատմություն | 2 | Էդիթ Պրինտ-21000000, Զանգակ-19800000 |
| 11 | Հասարակագիտություն | 2 | Մասնակցային դպրոց-5950000, Զանգակ-14400000 |
| 12 | Աշխարհագրություն | 1 | Աստղիկ գրատուն-16000000 |
| 13 | Ֆիզիկա | 1 | Էդիթ Պրինտ-22000000 |
| 14 | Քիմիա | 2 | Քնարիկ Հնձարի Բդոյան-16137200, Զանգակ-15600000 |
| 15 | Կենսաբանություն | 2 | Աստղիկ գրատուն-19300000, Անտարես-19890000 |
| 16 | Երաժշտություն | 2 | Էդիթ Պրինտ-11000000, Զանգակ-13440000 |
| 17 | Ֆիզկուլտուրա | 0 | |
| 18 | Կերպարվեստ | 1 | Զանգակ-9600000 |
| 19 | Արվեստ | 0 | |
| 20 | Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն | 0 | |

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

| Չափաբաժինների համարները | Չափաբաժնի անվանումը | Դասաքրքերի քանակ | Մասնակիցների գնային առաջարկը |
|---|---|---|---|
| 1 | Մայրենի | 1 | Էդիթ Պրինտ-22000000 |
| 2 | Մաթեմատիկա | 2 | Աստղիկ գրատուն-6300000, Մասնակցային դպրոց-5950000 |
| 3 | Ռուսաց լեզու | 0 | |
| 4 | Անգլերեն | 2 | Զանգակ-6300000, Մարի հրատարակչություն-5300000 |
| 5 | Ֆրանսերեն | 1 | Անտարես-12600000 |
| 6 | Գերմաներեն | 1 | Զանգակ-6300000 |
| 7 | Իմ հայրենիքը | 2 | Էդիթ Պրինտ-17000000, Արա Աթայան-9900000 |
| 8 | Բնություն | 2 | Էդիթ Պրինտ-15000000, Աստղիկ գրատուն-13500000 |
| 9 | Կերպարվեստ | 1 | Զանգակ-9600000 |
| 10 | Երաժշտություն | 3 | Էդիթ Պրինտ-11000000, Զանգակ-15360000, Արևիկ-1440 |
| 11 | Տեխնոլոգիա | 2 | Էդիթ Պրինտ-11000000, Աստղիկ գրատուն- 13500000 |
| 12 | Ֆիզկուլտուրա | 1 | Աստղիկ գրատուն-19500000 |
| 13 | Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն | 1 | Անտարես-19890000 |

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

| *Չափաբաժինների համարները* | *Չափաբաժնի անվանումը* | *Դասաքրքերի քանակ* | *Մասնակիցների գնային առաջարկը* |
|---|---|---|---|
| 1 | Մայրենի (1-ին և 2-րդ մասեր) | 2 | Վաչագան Սարգսյան-6300000, ԷդիթՊրինտ-21000000 |
| 2 | Մաթեմատիկա (1-ին և 2-րդ մասեր) | 3 | Զանգակ-24 800 000, Աստղիկ գրատուն-19000000, Էդիթ Պրինտ-21000000 |
| 3 | Ռուսաց լեզու | 1 | Անտարես-18890000 |
| 4 | Ես և շրջակա աշխարհը (1-ին և 2-րդ մասեր) | 2 | Աստղիկ գրատուն-19000000, Մասնակցային դպրոց-5950000 |
| 5 | Կերպարվեստ | 1 | Զանգակ-7680000 |
| 6 | Երաժշտություն | 3 | Զանգակ-9600000, Էդիթ Պրինտ-9000000, Արևիկ-1440 |
| 7 | Տեխնոլոգիա | 1 | Էդիթ Պրինտ-11000000 |
| 8 | Շախմատի դասագիրք և վարժությունների տետր | 2 | Հայաստանի շախմատի ակադեմիա-6300000, Երևանի շախմատի ֆեդերացիա-6290000 |
| 9 | Ֆիզկուլտուրա | 1 | Աստղիկ գրատուն-21300000 |
| 10 | Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն | 1 | Զանգակ-12480000 |